

ՄԵՆԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարեկանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են
խաբանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԳԱՅԻՆՈՒԹԻՒՆ

Ինքնահաւան տգիտութիւն.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հայոց թատրոն. Պատասխան «Արձագանք»-ի խմբագրին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՊԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նախագահ Կարոսի ձանապարհորդութիւնը. Նամակ Թիֆլիսից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱՅԻՆՆԵՐ.—ԲՕՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԻՆԴԵՍՏՐԻԱՆ ՏԳՆՈՒԹԻՒՆ

Կան մարդիկ, որոնք մի առանձին ընդունակութիւն ունեն յանդգնութեամբ այնպիսի նիւթերի մասին խօսել, որոնց հետ նոյն իսկ հեռուոր ծանօթութիւն չունեն: Այդ տեսակ մարդկանց թւին պատկանում է և նախկին «Փորձի» և այժմեան «Արձագանքի» խմբագիրը:

Մեր լրագրի տան և վեց տարւոյ զոյգութեան ընթացքում, բանականով պ. Յովհաննիսեանի այդ երկու օրգանների դէմ, շատ անգամ առիթ ենք ունեցել ցոյց տալ թէ բուն խմբագրական առաջնորդող և բանասիրական յօդուածներով և թէ մեր այլ և այլ աշխատակիցների յօդուածներով, պարոնի կատարեալ տգիտութիւնը այն հարցերում, որոնց մասին նա իր օրգաններում շատ անգամ խօսել է ամենափտած փարպապետական ձևով:

Եւ երբ որ այդ տեսակ մարդիկ մի հարցում կատարելապէս տգէտ են, նրանք սիրում են հակառակորդին շրջանը բարձր խօսքերով, անտեղի ֆրազներով և անտեղի համեմատութիւններով... որպէս զի ցոյց տան իրանց հմտութիւնը:

Այդպէս էլ արեւ է «Արձագանքը» իր № 36-ի մէջ ստանալով յօդուածում, որի նիւթն էր Ներսիսեան զարդի ուսուցիչ պ. Արապանեանցի բողոքը հոգաբարձական վճարի դէմ, որով նա արձակված էր զարդի ուսուցչութիւնից: Իր երկու միտքով, կամ աւելի լաւ է ասել՝ իր զարմաշալի հմտութիւնները՝ մեզ, հասարակութեանը և «Արձագանքի» ընթերցողներին ապացուցանելու համար՝ հարկաւորվեց պ. խմբագրին խօսել և «կօլէգիական» հիմնարկութիւններին մասին, և նահանգական դատարանի ու դատաստանական պալատի մասին, և «դուռայի» ու «գէմալօի» մասին, և մինչև անգամ սահմանադրական երկիրներին մէջ ընդունված և գործարկվող «ve-to»-ի մասին և այլն... Եւ այդ բոլորը դրա համար, որպէս զի ապացուցանէ թէ մի ուսուցիչ, որը հոգաբարձական վճարով արձակվում է իր պաշտօնից, իրաւունք ունի գանդատվել, բողոքել հոգաբարձուների վճարի դէմ:

Նորերումս հետեւեայն է պատահել: Խօսքը Արեւմտանցի երեցփոխանութեան մասին էր. «Արձագանքը» պնդում էր, որ ծխակաշիկի այն ժողովը, որը Արեւմտանցի տեղ ուրիշ երեցփոխին ընտրեց՝ անվաւեր էր, որովհետեւ ծխակաշիկի հետ ժամաւորները չէին մասնակցել ձայնատուութեանը: Բանից յայտնվեցաւ, որ պ. Յովհաննիսեան խօսում էր մի հարցի մասին, առանց տեղեկութիւն ունենալու նոյն հարցի մասին... Բանից յայտնվեցաւ, որ նա չը գիտէր, որ վաղուց է արդէն զոյգութիւն ունի և գործարկվում է երեցփոխների ընտրութեան ժամանակ, մի առաջնորդական հրահանգ, որի զօրութեամբ երեցփոխի ընտրութեան մէջ կարող է մասնակցել մի-միայն ծուկը և ոչ թէ ժամաւորները...

«Փորձի» և «Արձագանքի» զոյգութեան ընթացքում մենք բազմաթիւ օրինակներ կարող ենք ցոյց տալ՝ երբ նրանց խմբագիրը խօսում էր այս կամ այն հարցի վերա, առանց ամենահեռուոր տեղեկութիւն էլ ունենալու նոյն հարցի մասին:

Հիմա էլ, համ խմբագիր, համ Ներսիսեան զարդի հոգաբարձուներից մին լի-

նելով, փոխանակ ուսումնասիրելու նոյն զարդի կանոնադրութիւնը, պ. Յովհաննիսեան սկսում է խօսել «դուռայի», «դատարանի» «պալատի» և «սահմանադրութեան» մասին...

Մենք մի հարց կառաջարկենք պ. խմբագրին. երբ որ նա մի օր և է կարգադրութիւն է անում «Փոխադարձ կրեդիտի» ընկերութեան մէջ, որի դիրեկտորները մէկն է նա, արդեօք այդ իր կարգադրութիւնը ընկերութեան կանոնադրութեան համեմատ է անում նա, թէ առանց ուղղորդութիւն դարձնելու յիշեալ կանոնադրութեան վրա: Նրկուսից մէկը. կամ կանոնադրութիւնները զոյգութիւն ունեն, կամ նրանք զոյգութիւն չունեն: Գտնի որ նրանք կանոնադրութիւն են, որ կանոնադրութիւնը կարող է նոյն հաստատութեան առաջարկութեամբ և պատշաճաւոր բարձր իշխանութեան կարգադրութեամբ՝ փոխփոխել: Այն ժամանակ զարձեալ պէտք է գործել համեմատ նոր, փոփոխված և նոյն օրպէս ինքնութիւն ունեցող կանոնադրութեան: Այս օրպէս մենք ունենք Ներսիսեան զարդի համար միայն մի կանոնադրութիւն, որը հաստատված է Մատթէոս կաթողիկոսի կօնգակով յունիսի 9-ին, 1861 թւին:

Ահա ինչ ենք կարողում յիշեալ կանոնադրութեան մէջ:

Կանոնադրութեան 17-րդ յօդուածում ստված է, որ հոգաբարձուները «ամենայն ինչից, և գործը բաց ուսումնական մասին և անտեսականին առաւելութեամբ ձայնից քննին և վճարին»:

Կանոնադրութեան 4-րդ յօդուածում ստված է, որ հայոց հոգեւոր ուսմանց ուսուցչին «ըստ ընտրութեան թեմակալ առաջնորդի, կարգէ հոգաբարձութիւնը և զայնմանէ յայտնէ վեհափառ կաթողիկոսին ի ծանօթութիւն. իսկ ի դէպ անհամաձայնութեան, կարծիք է իւրաքանչիւր ուրիշ առաջարկին ի անօրէնութիւն վեհափառ կաթողիկոսի»:

Նշանաւոր է, որ զարդի հոգեւոր ուսմանց ուսուցչի մասին երկու կողմի կարծիքն էլ, այսինքն հոգաբարձութեան և առաջնորդի, պիտի յայտնվի կաթողիկոսին, բայց ուսուցչի կարծիքի մասին ոչինչ ստված չէ:

Այժմ գտնեք միւս առարկաների վերաբերեալ կէտերին յիշեալ կանոնադրութեան մէջ:

Կանոնադրութեան 5-րդ յօդուածի մէջ ստված է: «Հոգաբարձութիւն զարդին կարգէ և արձակէ ըստ իւրում նկատողութեան զուսուցչիս լեզուի և պատմութեան հայոց: Իսկ զասական գրեանք այն առարկայից, նոյնպէս և հոգեւոր ուսմանց, ենթարկելու են խմբագրութեան և հաստատութեան Սինոդին ու իշխմանին»:

Վերջապէս կանոնադրութեան 16-րդ յօդուածի 3 կէտի մէջ կարդում ենք, որ հոգաբարձութիւնը իրաւունք ունի «կարգել և արձակել զամենայն ուսուցչիս իւրով ի իշխանութեան մէջ, բացի յիշատակելից ի 4-րդ յօդուածն»:

Խնդրում ենք ն. Յովհաննիսեանից ցոյց տալ մեզ ամբողջ կանոնադրութեան մէջ մի կէտ, որտեղ ստված լինէր որ. «Հոգաբարձութեան և ուսուցչի մէջ ծագած անհամաձայնութեան դէպքում, ուսուցչի իր պաշտօնից արձակման դէպքում այդ վերջինը իրաւունք ունի ուղղակի գանդատվել հոգաբարձութեան վճարի դէմ բարձր հոգեւոր իշխանութեանը»:

Իսկ եթէ մի բան կանոնադրութեան մէջ չը կայ,—լինի այդ կանոնադրութիւնը զուսուցչի կանոնադրութիւն, թէ պարզապէս կանոնադրութիւն, լինի դա փոխադարձ կրեդիտի ընկերութեան, թէ Ներսիսեան զարդի կանոնադրութիւն,—ինչ իրաւունքով կարող էր անել այն, ինչ որ

կանոնադրութիւնից զուրս է: Բարեհաճեցէք պատասխանել: Եւ արդեօք չէք ենթարկվում դուք պատասխանատուութեան, եթէ այդ կանէք, օրինակ, ձեր վարած բանկի վերաբերմամբ... Բայց ինչպէս երևում է հայոց հաստատութիւնների՝ եկեղեցու և դպրոցի վերաբերմամբ, ամեն բան կարելի է անել, որը օրէնքից և կանոնադրութիւնից զուրս և նրանց հակառակ լինել, եթէ այդ պարտի վարմունքը այս կամ այն անձին ձեռնառու է: Այդ թէօրին բարոյգում էր և դուք և ճարպիկ իրաւաբան Եւանգուլեանց:

Վատ է թէ լաւ է մի օր և է կանոնադրութիւն, բայց քանի որ նա կայ և չէ փոփոխված,—նրան պէտք է ճշդութեամբ և սրբութեամբ կատարել: Բայց գործել իր ցանկութեան համեմատ, գործել եղած կանոնադրութեան դէմ, գործել այս կամ այն ձևով, նայելով թէ ո՞ր գործողութիւնը աւելի ձեռնառու և շահաւէտ է,—դա կը նշանակէ զեղծել կանոնադրութիւնը:

Եւ այդ քարոզում էր դուք թէ հիմա, և թէ քարոզել էք Եւանգուլեանի հետ միասին և Գամպիէնց եկեղեցու երեցփոխանական հարցի մասին ծագած բանական ժամանակ... Գարոզել էք և եկեղեցական ընտրողական սկզբունքի մասին ծագած բանական ժամանակ...:

Ուրեմն ամեն տեսակ կանոնադրութիւնների զեղծելը մարդիկ իրաւունք ունեն քարոզել, երբ իրանց նպատակների համար այդ հարկաւոր է, այն մարդիկ, որոնց յանձնված են հարաւոր ու մի հասարակական հաստատութեանց կանոնադրութիւնների ճշդութեամբ կատարելը:

Գուք երկուսը չէ՛ք, որ քարոզում էիք թէ ծուկը իրաւունք չունի ընտրել երեցփոխ այն մարդուն, որին ինքն է ուղղում, դուք չէ՛ք, որ զիտմամբ անտես էիք առնում կանոնադրութիւնը թէ եկեղեցու երեցփոխը ընտրվում է ծուկից և հաստատվում է թեմական առաջնորդից, դուք չէ՛ք, որ քարոզում էիք թէ չընտրված երեցփոխը կարող է հաստատվել հակառակ ծուկի կամքի և առանց թեմական առաջնորդի վաւերացման: Գուք չէ՛ք որ հռչակելով ձեզ չայատանայեց եկեղեցու պաշտպաններ, հարկաւոր ժամանակ, ձեր կամքին համեմատ՝ տակն ու վրա էիք առնում թէ ծխական և թէ եկեղեցական ինքնավարութեան զարեւոր կանոնադրութիւնը:

Եւ դուք գեւա համարձակվում էք խօսել «դուռայի», «գէմալօի» և եւրօպական «սահմանադրութեան» մասին: Խնդրում ենք այդ վերջինի մասին գտնէ մի խօսէք (դա ձեր ինքնի բանը չէ):

Խօսեցեք միայն դուռայի և գէմալօի մասին: Այո՛, դուք ուղիղ էք ասում որ այդ ինքնավար և ընտրողական հաստատութիւնների այս կամ այն կարգադրութեան վերաբերմամբ, բարձր իշխանութիւնը, կատարելութիւնը (սենսոր թէ միմիտրութիւնը) իրաւունք ունեն գործադրել իրանց «ve-to»: Սակայն մոռանում էք որ «կրտս» էլ ունի իր սահմանները, չէ անցնում հաստատված «սահմանադրութեան» սահմաններից: Այդ «վեթոն» այն աստիճան անսահման կերպով չէ գործադրվում որ նրա գործը դրվելով ոչնչանայ նոյն իսկ սահմանադրութիւնը:

Մի քաղաքագրութիւն, չորս տարի ծառայելուց յետոյ, այլ ևս չէ ընտրվում: Նա քաղաքային կանոնադրութեան զօրութեամբ կարող է գանդատվել բարձր իշխանութեանը (լինի դա քաղաքային գործերը վարող նահանգական ատեանը թէ սենատը) թէ նոր քաղաքագրի ընտրութիւնները անվաւեր, անկանոն են եղել: Բարձր իշխանութիւնը կարող է, այո՛, իր «ve-to» գնել եղած ընտրութիւնների վրա, նշանակելով նոր ընտրութիւններ, բայց նա չէ

կարող իր «վեթոն» այնտեղ հասցնել, որ իր այդ «վեթոյով» քանդի, ոչնչացնի նոյն իսկ ինքնավարութիւնը, նա չէ կարող չընտրված (կամ սեպարած) քաղաքագրին կամայաբար նորից հաստատել, իսկ ընտրվածին չը հաստատել: Այդ դէպքում դա կը լինէր արդէն ոչ թէ ընտրված քաղաքագրութիւն, այլ կառավարութիւնից նշանակված քաղաքագրութիւն: Նոյնպէս բարձր հոգեւոր իշխանութիւնն էլ կարող է նոր ծխական ընտրութիւններ նշանակել, եթէ ընտրութիւնները անկանոն են եղել, բայց նա չէ կարող ընտրված երեցփոխին չը հաստատել իսկ չընտրվածին (կամ սեպարածին) նորից հաստատել: Դա կը լինէր արդէն կանոնադրութեան խախտում և զեղծում, դա կը նշանակէր որ երեցփոխը այլ ևս չէ ընտրվում ծուկից ու հաստատվում թեմական առաջնորդից, այլ ուղղակի նշանակվում է հոգեւոր բարձր իշխանութիւնից:

Այժմ նոր բան, այժմ դուք քարոզում էք որ հոգաբարձութեան իշխանութեամբ արձակված ուսուցչին էլ իրաւունք ունի կանոնադրութեան մէջ չեղած յօդուածի հիման վրա բողոքել հոգեւոր բարձր իշխանութեանը հոգաբարձութեան վճարի դէմ և, ինչպէս երևում է, շատ բնական էլ կը գտնէիք, եթէ այդ բողոքի հետեւանք այն լինէր՝ որ հոգեւոր իշխանութիւնը, ընդհանրապէս հոգաբարձութեան կամքի, նորից հաստատել իր առաջնայ պաշտօնում նոյն արձակված ուսուցչին:

Եւ այդ տեսակ՝ absurdum—ներ և զեղծումների հարաւորութիւնը քարոզող մարդկանց,—հասարակութիւնը յանձնել է տանտեսակ հաստատութիւնների կանոնադրութիւնների ճշդութեամբ կատարելը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

Վերակի, սեպտեմբերի 18-ին, Թիֆլիսի Առեւտրական կուրբի դահլիճում, վերջապէս կայացաւ պ. Տէր-Գաւթեանցի նշանակված ներկայացուցիչ: Տէր-Գաւթեանցի դահլիճը գրեթէ լի էր հասարակութեամբ: Սկզբում խաղացին պ. Սանդուկեանցի հեղինակած «Ոսկեան Պետրոսով» զգուշութեամբ վճարվելը, որը չափազանց կրճատել էին, և այդ պիւնսան շատ սառն անցաւ: Գետոյ ներկայացրին, առաջին անգամ ոմն Ա. Ս.-ի հեղինակած «Որթնաձալութեան» երկու գործողութեամբ վճարվելը, որը անցկացաւ ամենախաղաղական կերպով: Պիէտայի բովանդակութիւնը կայանում էր նրանում, որ մի կինտո կամեում էր Օրթնաձալի մի միկիտանից իր քամարի վրէժը հանել, որը յափշտակել էր նրանից իր հարբած ժամանակ յիշեալ միկիտանից, և ահա այդ կինտոն իր մի քանի ընկերներով գալիս է միկիտանի մօտ, 40 ռուբլու չափ ուսում ու խմում է և վերջը ոչինչ չէ վճարում, և միկիտանն էլ, երեսկայիցէք, ոչինչ կարական միջոցներ չէ գիտում իր փողերը ստանալու համար, այլ խմում է նրանց կենացը և պարզապէս ձանապարհ է գցում իր 40 ռուբլի տանողներին... Բոլոր գործող անձինքներէն ոչ մէկը չունէր կինտոի կատարեալ տիպ: Ոչ այդ վճարվելի վրա գործ գրած ամբողջ ժամերը, ոչ էլ պ. Տէր-Գաւթեանի անսպասելի կօմիական հնարները ու ջանքերը, չը կարողացան այդ պիւնսան օտի կանգնեցնել: Պիէտան գուրկ էր օր և է մտքից և բեմական յատկութիւններից: Պիէտայի ամբողջ գործողութեան ժամանակ թատրոնական բեմից լսվում էին միմիայն անասու լի յիշոցներ և գոռու ու գոչում: Պիէտայի լաւ կողմը միայն այն էր, որ նրա ներկայացման ժամանակ տիւրում էր գինտո

սեպտեմբերի 17—19, մի քանի փոփոխություններ մտցրին միայն ֆինանսների միջնորդության նախագծի մէջ: Ղլխաւոր պահանջը պարունակվում է հրէականին օղի քաշելու և առհասարակ խմիչքների գործից հեռացնելու և ներմուծված սպիրտի պահեստների թիւը փոքրացնելու մէջ:

Վ.Ա.Գ.Ի.Վ.Ա.Ս.Զ., 20 սեպտեմբերին երէկ տեղի ունեցաւ Բարձրագոյն դորանադէս, որին մասնակցում էին կողակների զօրքի մի քանի զօրաբաժինները, 13 արտիլերիական թնդանօթներ և մի քանի ուրիշ խմբեր: Զօրքին շրջադայելուց և հանդիսաւոր մարշլից յետոյ՝ Թագաւոր կայսրին ներկայացան կովկասեան զօրքի հինաւուրց զինուորականները: Դրանից յետոյ տեղի ունեցաւ նախաձայնիկ, որը պատրաստված էր 160 հոգու համար, և որը վերջնապէս յետոյ Նոցա Մեծութիւնները բարեհաճեցին այցելել զինուորական հիւանդանոցը, մասնաւոր բաժանմունքները, դոցա թուում և վարակիչ հիւանդների մասը:

Բ.Լ.Գ.Ս.Գ., 20 սեպտեմբերին Թագաւորը կրկին ընդգէմ է թագուհու հետ որ և է համաձայնութիւն կայացնելուն:

Վ.Ա.Գ.Ի.Վ.Ա.Ս.Զ., 21 սեպտեմբերին երէկ կայացաւ տեղիւնս զօրքի և զանազան ցեղերի պատգամաւորութիւնները ընդունելութիւնը: Պատգամաւորութիւնները Նոցա կայսրական Մեծութիւններին մատուցին աղ ու հաց և զանազան ընծաներ տեղական գործուածներէր, որոնցից մի քանիսները զարմանալի ճարտարութեամբ են շինված: Բացի տեղական զէնքեր և հագուստներ մատուցանելուց, Նոցա Մեծութիւններին և Բարձրութիւններին համար բերեցին վեց ձիեր: Նոցա Մեծութիւնները բարեհաճեցին այցելել քաղաքի ուսումնարանները: 11½ ժամին հիւրասիրվեցան պատգամաւորութիւնները: Նախաձայն էին ընդամենը 1,400 մարդիկ: Երեկոյեան հրապարակի վրա ժողովրդական զբոսանք կար:

ԲԱԳՈՒ, 21 սեպտեմբերին երէկ այստեղ ժամանեց պարսկական ծայրագոյն զեսպանը, շահի որդին:

Վ.Ի.Ե.ՆԱ, 21 սեպտեմբերին Պաշտօնական Հիւրերի ֆոտոյ լրագիրը ողջունում է Վիլհելմ կայսրի վիճէնա դալը և յայտարարում է, որ միջին և եւրոպական դաշնակցութիւնը բացառապէս արամաւոր է իսպառութիւնը պահպանել:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲՈՐՍԱ

Սեպտեմբերի 20-ին

Լօնդոնի վրա 10 ֆունտ արծէ.	93	25
Համբուրգի վրա 100 մարկ —	45	80
Փարիզի վրա 100 ֆրանկ —	36	70
Ռսկի — արծէ —	7	57
Մաքսային կուպոններ —	150	25
Արծաթ — — —	1	16
Բորսային դիվիդենդներ —	7	80/0
Պետակ. բանկ. 50/0 տոմս 1-ին շրջանի	98	25
— — — 2-րդ —	95	—
— — — 3-րդ —	94	25
— — — 4-րդ —	94	50
— — — 5-րդ —	94	75
— — — 6-րդ —	—	—
Նոր 40/0 փոխառութիւն.	80	50
Արեւելեան 50/0 փոխառութիւն. 1-ին շրջ.	94	37
— — — 2-րդ —	94	37
— — — 3-րդ —	94	62
Ներքին 50/0 առաջին փոխառութիւն.	262	—
— — — երկրորդ —	233	50
51/2 0/0 րէնտա	100	—
Ոսկեայ րէնտա	169	25
Եօթներորդ կօնսօլիդաժ փոխառութիւն.	142	—
Նոր երկաթուղային րէնտա	94	75
50/0 գրաւական թղթեր կալուած. փոխ. կրեդ. ընկ. մաս.	145	—
— — — թղթագ.	89	50
Գրաւ. թղ. Ալլան. բանկի	95	50
51/2 0/0 գրաւական թղթեր խորհուրդ կալուած բանկի.	96	50
60/0 գրաւակ. թղ. խորհուրդ կալ. բանկ.	100	—
— — — Պոլտաւայի —	99	—
— — — Պետ. Տօւրայի —	99	—
— — — Կիււիլի —	100	—
— — — Մոսկւայի —	100	—
— — — Բեռլինի —	100	—
— — — Նիւթ. Սամար. —	99	—
— — — Վիլնայի —	100	—
— — — Թիֆլիսի — 27 և 43 տ. —	—	—
— — — Բուխարայի — 18 և 43 տ. —	—	—
Վլադիսլաւ-Կառմալի բանկի ակցիաները 637	—	—
Ռուսաց երկաթուղիների գլխաւ. ընկ. 234	—	—
Բրիւսնի-Բոյոզովի ընկ.	81	—
Ս. Պետերբուրգի քաղաքային օրվա-գացիաներ.	92	—
Մոսկւայի քաղաք. օրվա գացիաներ.	90	—
Օղէտայի — — —	91	50
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օրվ. — — —	—	—
Ս. Պետերբուրգի բորսայի արամաւորութիւնը ամուր է:	—	—

Խմբագիր-հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՈՐ ՀԻՒՆԵՒԱՆՈՑ

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամէն օր

Ա. Ա. Ա. ՈՏԵՐԸ

ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—9—11 Ժ. վերաբուժական (նոյնպէս և ատամնացաւի) և վնէր. 9
ՐՈՒԿԻՎԱՍԿԻ—10—11 Ժ. ներքին, երեխայոց և կանանց ց.
ՍՕՐՕԼԵՎ—11—12 Ժ. ատամնաբոյժ.
ՏԱՐԱՍՏՈՂԵ—12—1 Ժ. ամէն օր, բացի կիրակի. աչքացաւ.
ԱՐՏԵՄԻԵՎ—12—1 Ժ. երեքշաբթի, ուրբաթ և կիրակի կանանց ց.
ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—12—1 Ժ. ներքին և երեխայոց ց. բացի երեքշաբթի և ուրբաթ.

ԵՐԵՎԱՆԵՐԸ

ԳԱԴՕՄՍԿԻ—5—6½ Ժ. կաշուի ցաւերի և սիֆիլիսի.
ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—6½—7½ Ժ.
ՓՈՒՂԻՆԵԱՆ—6½—7½ Ժ. ներքին և երեխայոց ց.
Հիւանդանոցում է մահ կա բարձուհի Մօզեբ:
ՎՃԱՐ—50 կ.: Համալսողհրդի (կօնսիլիումի) համար փոխադարձ համաձայնութեամբ:
Հիւանդանոցի վերատեսուչ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

Դուրս եկաւ մամուլի տակից և վաճառվում է զբաղմունքներում Սահակ քահանայ Սահակեանի հետեւալ աշխատութիւնները: ա) ՍՐԲԱՋԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ հին ուխտի 182 երես, զինն է 30 կօպ., բ) ԴԱՍԱԳԻՐԿ ԿՐՕՆԻ, ուղեցոյց հայ կրօնաւորացիների համար (հին ուխտի նիւթի մշակութիւնը) 494 երես, զինն է 1 ր. 75 կօպ.: Վերջին գիրքը պարունակում է իր մէջ 14 պատկեր և 3 քարտէզ:

Z-BOUQUET-Z-ԱՆՈՒՇԱՀՈՏ ՕԾԱՆԵԼԻՔ

գործարանի Բ. ԿԵՕԼԵՐԻ ԵՒ ԸՆԿ., Մօսկւայում

Որպէս «Z» տառը վերջինն է այլընտարանում, նոյնպէս և այս նոր անուշահոտ օծանելիքի բաղադրութիւնը վերջին խօսքն է պարփակեցական արուեստի մէջ: Միայնակով իր մէջ ֆրանսիական և անգլիական ամենահաշակաւոր անուշահոտ օծանելիքների բոլոր լաւ յատկութիւնները, նա դարձնում է նուրբ և զեղեցիկ հոտ ունի, չը նայելով այն բանին, որ այդ օծանելիքը իր ամրութեամբ զերպանցում է մինչև անգամ անգլիական անուշահոտ օծանելիքին և մի և նոյն ժամանակ գործածութեան ժամանակ հոտը չէ կորցնում:
Մշակվում է զաւառներում բոլոր նշանաւոր աւետարականների մօտ. Մօսկւայում—Բ. ԿԵՕԼԵՐԻ և ԸՆԿ. մօտ, Նիկոլսկայա փողոցի վրա: № 5. Ս. Բ. Օ. (2—3)

ՀԱՅՈՒՆԵԱՑ ԲԱՐԵԿՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ձեռագործի և ձևի ուսումնարանը բացվում է սեպտեմբերի 22-ին: Ընդունվում են ծխական ուսումնարաններում ուսումնի աւարտած օրիորդները:
Սերգէեւիկի փողոց, Շահպարտեանի տուն:
2—3

МЕДИКАЯ ГОСТИНИЦА

ВЪ ВАРШАВѢ

31. Длугая улица 31.

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԻՒՐԱՆՈՑ

ՎԱՐՇԱՎԱՅՈՒՄ, Կուղայա փողոց, 31. Գտնվում է քաղաքի նոյն լակ ԱՌԵՏՐԱԿԱՆ կենտրոնում, ԲԱՏՐՈՆԵՐԻ և ԲՈՂՐ ՊԱՇՏՈՆԱՏԵՂԵՐԻ կողքին:
90 անեկաներ, շքեղ կերպով յարմարեցրած, 30 կօպէկից մինչև 3 լուբլի օրական վարձով:

ԿՕՆԴԻՏԵՐԻԱ և ՐԷՍՏՕՐԱՆ

ձաշեր 30 կօպէկից մինչև 1 լուբլի:
ՕՄԵՐԻՈՒՄՆԵՐ և ԿԱՌՔԵՐ երկաթուղու բոլոր գնացքների համար:
ԿԱՌՔԵՐԻ վարձովը չափաւոր գներով:

(2)

ԿԵՕԼԵՐԵԱՆ ԾԱՂԿԱՋՈՐ

(ծաղիկ օղե-կօլօն)

Լաւ տուալէտային ջրերի. ճանաչող-գնահատողների համար:
Գաւառներում ծախվում է բոլոր նշանաւոր աւետարականների մօտ. Մօսկւայում—Բ. ԿԵՕԼԵՐԻ և ԸՆԿ. մօտ. Նիկոլսկայա փողոցի վրա: № 5. Ս. Բ. Օ. (2—3)

ЗУБНАЯ СРЕДСТВА А. ШТЕХЕРЬ
ПОДОЛЬСКАЯ ЗУБНАЯ КАПЛИ
КОРОБКА 50 и 80 К.
ГИГИЕНИЧЕСКИЙ КОКАИНОВЫЙ
ЗУБНОЙ ЭЛИКСИРЬ
БОЛЫША ФЛАКОНЪ 80 К.
ГИГИЕНИЧЕСКИЙ ЗУБН. ПОРОШОКЪ
КОРОБКА 30 К.
СКЛАДЪ ВО ВСѢХЪ АПТЕКАХЪ И АПТЕК. МАГАЗ.

ՊՐՕԿԻՋՈՐ Դ. ՇՏԵԻՆԻՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ
ԱՏԱՄՆԵՐԻ ՑԱԽԻ ԵՒ ՓՁԱՆԱԼԻՈՒ ԴԷՄ
ՊՈԴՈԼԵԱՆ ԱՏԱՄՆԱԴԵՂ ԿԱՌԻՆԵՐ 80 ԿՈՊ.
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿՕԿԱՅԻՆԵԱՆ ԱՏԱՄՆԱՅԻՆ ԷԼԻԿ-
ՍԻՐ 80 ԿՈՊ.
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԱՏԱՄՆԱՅԻՆ ՓՈՇԻ 30 ԿՈՊ.

ԳԼԽԱԻՈՐ ՊԱՀԵՍ. ԹԻՖԼԻՍԻՄ՝ Կովկասեան ղեղավաճառատան, և պ. պ. Շահպարտեանցի, Մակկերի, Սէնիկովսկու և Ալմուրօվի ղեղատներում: ԲԱԳՈՒԻ մէջ, Բէկկերի մօտ, ԳՈՒԹԱՅԻՍԻՄ՝ Կօկօշեկի մօտ, ՍՏԱՎՐՈՊՈԼԻՄ Բրօննօցկու մօտ և ԵԿԱՏԵՐԻՆՕՒՐԻՄ՝
(2.)

ВЫСОЧАЙШЕ УТВЕРЖДЕННОЕ
Российское Общество Застрахованія капиталовъ и доходовъ
УТВЕРЖД. ВЪ 1835 ГОДУ

ԲԱՐՁՐԱԳՈՑՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ
Ռուսաց ընկերութիւն կապիտալների և եկամուտների ապահովութեան
հիմնված 1835 թվին

Ամենահին և միակ ուսուց ընկերութիւն, որը բացառապէս պարապում է կեանքի (կապիտալների և եկամուտների) ապահովութեան գործով, փոխադարձութեան սկզբունքների վրա:

ԸՆԴՀԱՆՈՐ ԴՐԱՄԱԳԼՈՒԻ 8,000,000 ՐՈՒԲԼԻ

- Կապիտալների ապահովութիւնը ժԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ համար, ապահովացնողի մահուան դէպքում:
- Կապիտալների ապահովութիւնը ԾԵՐՈՒԹԻՒՆԸ և երեխաների համար ԲԱԺԻՆԲԸ ապահովացնելու համար:
- Եկամուտների և ցմահ նշանակվող ԹՈՇԱԿՆԵՐԻ ապահովութիւնը:
Տարիքները և մանրամասն տեղեկութիւնները ուղարկվում են անվարձ ԳԼԽԱՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ կողմից, որը գտնվում է Թիֆլիսում, Վելիամինովսկայա փողոց, տուն № 24.
Գլխաւոր Ագէնտ և Տեսուչ Կովկասեան երկրի համար՝ Ն. Ն. ԳՐՈՒՋԵՆԵՐԵՐԳ:

—ՊԱՀԱՆՋՎՈՒՄ ԵՆ ԱԳԷՆՏՆԵՐ ԵՒ ԱՇԽԱՏԱԿԻՏՆԵՐ—
Թիֆլիսի և կովկասեան ուրիշ քաղաքների համար: 20—32 (2)

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳԵԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ և ԲԱՌՈՒՄԻ մէջ և փոխադարձ. Հինգշաբթի, սեպտեմբերի 29-ին, ՄԻՆԳՐԵԼԻԱ (MINGRELIÉ) շոգենաւը, նաւապետ ԺԻԲՈՒՆ (GIBOIN) զուրա կը գնայ Բաթումից դէպի Տրապիզօն, Օրդու, Սամսոն, Կ. Պօլիս և Մարսէլը: Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում Լէմոյղուի տան, Նաբերէժնայա, և Թիֆլիսում նախկին Արժրուհի գալլերէում, № 103.
2—3

ԿԵՐՈՍԻՆԻ ՊԱՀԵՍ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ

ԴԷՊՕ ԼԱՄՊԱՆԵՐԻ ՊԱՏԱՌՆԵՐԻ ԵՒ ՄԷԲԷԼԻ

Ե. Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆՑԻ

գտնվում է Վօկզալի մօտ, Կասպեան-Սև-ծովի նաւթարդիւնադործական ընկերութեան պահեստում, նախկին Կարտվելովի

ԿԵՐՈՍԻՆԻ ԵՒ ՄԱՋՈՒՏԻ ՎԱՋԱՌՈՒՄՆ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ
24—25 (2)